

ՏՕՆԱԿԱՆ ՕՐԵՐՈՒՆ

24 ԺԱՄ ԵԼԵԿՏՐՈՆԻԿԱՆՈՒԹԻՒՆ

Ուժանիթի եւ ջորի հարցերու նախարար Մոհամմադ Ապտալի Համիտ Պայտուն երկէ շեշտեց, որ էլեկտրականութեան հոսանքի հայթայթման համար բոլոր շրջաններուն մէջ էլեկտրականութեան կայաններու նորոգութիւնները պիտի չզգոնուին, եթէ փոթորիկներու պատճառով տեղի ունենան խանգարումներ:

«ՔԱՅԻՏԱՒ» ԱՆՆՈՒՄՈՂ ՓՍՍԱԾՈՒՂԹԵՐ ՈՒՆԵՆԱԼՈՒ 3ԱՆՑԱՆԲՈՎ

ԱՐԳԻԼԵԱԼ «ԼԻԲ. ՈՒԺԵՐ» ՈՒ ԱՆ ԴԱՄՍԸ ԿԸ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԻ

Արգիլեալ «Լիբանանեան Ուժեր» կուսակցութեան անդամ Յատի Շամարի երկէ ձերբակալուեցաւ՝ հիւսիսի վերադառնալու ատենի ընդհանուր դատախաչ Ռեմոն Ուայտաթի հրամանով: Շամարիի ինքնաշարժին մէջ գտնուեցան «Քայիտա» ցանցին առնչուած տեղեկութիւններ բովանդակող փաստաթուղթեր:

21 ԴԵԿՏԵՄԲԵՐ - 28 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2002

ԵՐԿԻՐ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ «ԵՐԿԻՐ» ՇԱՐՍԹԱԾԵՐԹԻ

ԴԻՄԱԿՈՐԵՆԸ ՆՈՐ ՏԱՐԻՆ «ԱՂԲԱԼԵԱՆ - Հ.Մ.Ը.Մ.» ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻՆ ՄԵՋ

ԱՐՅԱԼԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ՖՈՆՏԻՆ

ԹԱՂԱԿԱՆ ԼՆՏՐՈՒԹԻՒՆ Ա. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՎԱՐՉԱՊԵՏ ՌԱՖԻԲ ՀԱՐԻՐԻԻ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Վարչապետ Ռաֆիբ Հարիրի երկէ շեշտեց Միացեալ Նահանգներու մէջ կայանալիք արաբեւամերիկեան տնտեսական վեհաժողովին արաբական կայմակերպութիւններուն աշխատանքին անհրաժեշտութիւնը: Նշեալ վեհաժողովը պիտի կայանայ յառաջիկայ 15ին 17 Մայիսին:

մայր պողոտաները նորոգելու հեռանկարները: Ժողովականները ուսումնասիրեցին նաեւ ծրագիր մը, որ կ'ընդգրկէ 1600 քմ. երկարութեամբ ճամբաներու վերաշինութիւնը:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

- ՆԵՐՔԻՆ ապահովութեան ուժերը հիւսիսի մէջ «ապահովական երկիր» մը գործարկեցին՝ հիմնուելով նախարար Էլիաս Մըրիի հրահանգներուն վրայ:
ՄԱՐՏԱՔԻՆ գործոց նախարարութեան ընդհանուր քարտուղար Մոհամետ Իսա երկէ ընդունեց Լիբանանի մէջ Իրանի դեսպան Մեսուտ Իտրի-սին, որ մերժեց յայտարարութիւններ կատարել հանդիպումէն ետք:
ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ նախագահ Նեպիթ Պըրրի երկէ տարբեր շրջաններու քաղաքապետներու հետ քննարկեց բարգաւաճման հարցեր եւ Նոր Տարուան առիթով շնորհակցանակներ ներկայացրաւ իր շնորհակցանակները, Նոր Տարուան առիթով:
ԼԻԲԱՆԱՆԻ մէջ սուրիական ուժերու հրամանատար Կարմալ Լա-հուտի եւ յայտնեց իր շնորհակցանակները, Նոր Տարուան առիթով:
ԼԻԲԱՆԱՆԻ մէջ սուրիական ուժերու հրամանատար Միշէլ Սլէյմանի:

ԹԱՂԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Յառաջիկայ Կիրակի, 22 Դեկտեմբեր 2002ին, Լիբանանի թեմի ծխային բոլոր շրջաններէն ներս տեղի պիտի ունենան քաղականութեան ընտրութիւններ: Ազգային Սահմանադրութեան համաձայն, քաղականութիւնները կ'ընտրուին չորս տարուան շրջանի մը համար եւ վերընտրելի են:

365 ՕՐԵՐԸ ՕՐ ՄԸ ՀԱՅ ԾԵՐԱՆՈՅԻՆ

Ուրախ լուր... սակերը նուազեցան

ԱՆՁՐԵՒ ԵՒ ՓՈԹՈՐԻԿ՝ ԱՅՍՕՐ ԵՒ ՎԱՂԸ

Պէյրութի օդակայանին օդերևութաբանական կէդրոնը յայտնեց, որ անձրեւները պիտի շարունակեն տեղալ՝ իրենց հետ բերելով նաեւ փոթորիկներ:

ՈՒԱՇԻՆԿԹԸՆ ԲԱՅԱՅՑՏՕՐԷՆ...

Երոպական շրջապտոյտի մը ձեռնարկած է, երկէ փորձեց երոպացիները համոզել, որ իրենց իրենց կապերը պահպանեն իշխանութեան նախագահ Եսա-սէր Արաֆատի հետ: Հոռոմի մէջ կատարուած մամուլային ասուլիսի մը ընթացքին, Նեթանիահու ըսաւ, որ Արաֆատի եւ Ուսամա Պըն Լատէնի միջեւ մեծ տարբերութիւն չկայ: «Միակ տարբերութիւնը այն է, որ Արաֆատ լաւ կապեր ունի Երոպայի հետ», ըսաւ իսրայէլացի նախարարը: Նեթանիահու աւելցուց, որ Միացեալ Նահանգներու մէջ իր տարբերութիւնը գոյութիւն չունի, որովհետեւ Արաֆատ ալ ահաբեկչական ղեկավար կը նկատուի: Նեթանիահու քննադատեց պաղեստինեան պետութիւնը մը յայտարարելու ծրագիրները, զիտել տալով, որ այդ պետութիւնը «Արաֆատաստան» պիտի ըլլայ եւ ուր պաղեստինցի ղեկավարը ազատօրէն ու անկաշկանդ ահաբեկչութիւն պիտի կիրարկէ:

ՎԱՆԱՅ ՉԱՅՆ ՎԱՆԱՅ ՉԱՅՆ Այսօր՝ Ուրբաթ, 20 Դեկտեմբեր, կեսօրէ առաջ ժամը 11:00ին կրնաք ունկնդրել հարցազրոյց մը դաշնակախարոսի ԱՐՄԻՆԷ ԱՊԱՃԵԱՆ - ՊԱՄԱՃԵԱՆԻ հետ:

PHOTO NERSES ԱՐԱԳ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ - ՈՐԱԿԱՌՈՐ ԼՈՒՍԱԿԱՐՆԵՐ

Հայ Կաթողիկէ ՄԵՆՐՈՊԵԱՆ Արուեստից Վարժարան Բացում Բ. երկամսեակի Անգլերէն՝ 16 Դեկտեմբերին Համակարգիչ՝ 23 Դեկտեմբերին

ՄԻՆԻՐԱ ԴԱՍԱԽՕՍԵՑ ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ՄԵՉ

Ելեմուտքի նախարար Ֆուատ Սինիրա երկ յայտարարեց, որ կը նախատեսէ, թէ պետական պիտոճէին բացը հաւանաբար արձանագրէ 25 առ հարիւրի նուազում:

Սինիրա արաք ներդրողներու խորհրդրդածողովին բացումին ներկայացուց «Փարիկ-2» ժողովին արդիւնքները՝ նկատել տալով, որ կառավարութեան որդեգրած տնտեսական բարգաւաճման ծրագիրը սկսած է դրական ազդեցութիւններ ունենալ:

«Մերոստիտիք Փայաս» պանդոկին մէջ, նշեալ խորհրդածողովին բացումը կատարեց Սինիրա իբրեւ վարչապետ Ռաֆիք Հարիրիի ներկայացուցիչ:

ՀԱՅԿԱԶԵԱՆԻ ՄԵՉ

Հայկապեան համալսարանին մէջ Սինիրա դասախօսեց Լիբանանի ելեմուտական եւ տնտեսական կացութեան մասին՝ շեշտելով, որ ելեմուտքին կայունութիւնը հիմնական է, պահպանելու համար նիւթական սահմանափակ մուտք ունեցող ընտանիքներուն շահերը:

Ան ընդգծեց, որ կառավարութիւնը կը ջանայ բարելաւել տնտեսական կացութիւնը:

Դասախօսութեան ներկայ գտնուեցան Հայկապեան համալսարանի նախագահ վեր. դոկտ. Փօլ Հայտոսեան եւ այլ պատասխանատուներ, դասախօսներ եւ ուսանողներ:

ՎԱՌԵԼԱՆԻԹԻ ՆՈՐ ՍԱԿԱՑՈՅՑ

Վառելանիթի նոր սակացոյցին համաձայն, պենպիին սակը արձանագրեց 200 լ. ոսկիի յաւելում, իսկ քարիւղը՝ 100 լ. ոսկի եւ մազութը՝ 200 լ. ոսկի, ինչպէս նաեւ ֆիոլ օլլը՝ մէկ տոյար:

Նոր սակացոյցը հետեւեալն է.՝
Սոսնց կապարի 98 օքթան մէկ թիթեղ պենպիինը՝ 20,200 լ. ոսկի, 95 օքթան սոսնց կապարի պենպիինը՝ 19,400 լ. ոսկի, 92 օքթան սոսնց կապարի պենպիինը՝ 19,000 լ. ոսկի, 90 օքթան սոսնց կապարի պենպիինը՝ 18,900 լ. ոսկի, քարիւղը՝ 8,000 լ. ոսկի, մազութը՝ 7,800 լ. ոսկի, իսկ մէկ տակառ ֆիոլ օլլը՝ 191 տոյար:

ԼԻԲԱՆԱՆ ԵՒ ԵՄԵՆ ԸԱՍՏԱՏԵՑԻՆ...


Շարունակուած Ա. Էջէն

Նախագահ Լահուտ երեկոյեան ընթրիք մը սարքեց ի պատիւ նախագահ Սալէհի:

Միւս կողմէ, նախագահ Սալէհ իր կեցութեան վայրին՝ «Մերոստիտիք» պանդոկին մէջ ընդունեց խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրին, որուն հետ քննարկեց շրջանային իրադարձութիւնները եւ խորհրդարանական մակարդակի գործակցութիւնը երկու երկիրներուն միջեւ:

Վարչապետ Ռաֆիք Հարիրի իր կարգին այցելեց նախագահ Սալէհի: Քննարկումի առարկայ դարձան լիբանանեան եւ Եմենի յարաբերութիւնները:

Նախագահ Սալէհ երկօրեայ իր պաշտօնական այցելութիւնը երկարածեց. կը նախատեսուի, որ ան վաղը՝ Շաբաթ, մեկնի Լիբանան:



Տեղական մամուլը իր 19 Դեկտեմբերի թիւով յուսարձակի տակ առած է Սուրիոյ նախագահ Պաշար Ասատի Ֆրանսա այցելութիւնը: Սուրիոյ նախագահի ժամպայտի ըսելով, թէ կառավարութեան փոփոխութիւնը չկայ:

Սուրիոյ նախագահին Ֆրանսա այցելութեան առջնութեամբ շրջան ընող լուրերը եւ իրաքեան հարցին վերջին իրադարձութիւնները:

«Նահար» գրած է, թէ խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրիի, փոխ վարչապետ Իսամ Ֆարեսի եւ Ընկերվար Յաւազիի մական կուսակցութեան կատարած յարձակումներէն ետք, կառավարական փոփոխութեան հարցը կը ցնցէ նախարարաց խորհուրդը:

Ըստ թերթին, Կոր. Լահուտ կ'ըսէ. «Պէտք է աշխատիք այնպէս, կարծեք այսօր ստանձնած էք ձեր պատասխանատուութիւնները»:

«Մաֆի»-ի համաձայն, նախագահ Լահուտ կը ծիտէ որեւէ փոփոխութեան գոյութիւն, իսկ խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրի իր յարձակումները կը շարունակէ:

Ըստ «Տիար»-ի, նախարարաց խորհուրդին վարկը ձեւակաւորեցին հաստատուեցաւ եւ իշխանութեան երեք պետերուն հանդիպումը տեղի չունեցաւ: Քննարկումի առարկայ դարձան կառավարութեան իրավիճակը եւ նախարարներուն միջեւ եղած համագործակցութիւնը, Չորեքշաբթի օր տեղի ունեցած ցոյցերուն կարգ մը երեսփոխաններուն մասնակցութիւնը:

Թերթը նշած է, թէ որդեգրուած է հետեւեալ ելքը. «Կառավարութիւնը տակաւին կը շարունակէ գործել. վայն կենդանի պահեցէք թրուածիւնի միջոցով՝ մինչև իրաքի հարցին յստակացումը»:

«Անուար» նշած է, թէ կառավարութեան մէջ գտնուող յայտնի բեւեռներ կը պատրաստուին կառավարութեանն էն դուրս գտնուող կողմերու հետ տեսակցելու:

«Պայրաք»-ի համաձայն, նախագահ Լահուտ ըսած է, թէ կառավարութեան փոփոխութեան հարց չկայ ներկայիս: Թաէֆի համաձայնագիրին առիտը գործադրութիւն նախարարաց խորհուրդը վերածուեցաւ գործադիր իշխանութեան:

«Նախագահ Լահուտ եւ վարչապետ Հարիրի կը պաշտպանեն կառավարութիւնը եւ անոր դէմ եղած քննադատութիւնները եւ կը վստահեցնեն, թէ անիկա անփոփոխ պիտի մնայ», գրած է «Բիֆահ Արապի»:

«Լիուա» գրած է, թէ քաղաքական անակընկալ մը վերստին իսրաքարտերը կը խառնէ եւ այլընտրանք կը

նկատուի կառավարութեան գործունէութեան աշխուժացումը: Նախագահ Լահուտ կը հակադարձէ Պըրրիի եւ ժամպայտի ըսելով, թէ կառավարութեան փոփոխութիւնը կը գրաւէ օրաթերթերուն առաջին էջերը:

«Մուսթաքպալ» գրած է, թէ Սուրիոյ նախագահը յայտնած է, թէ Ֆրանսայի հետ համակարգում կը կատարուի իրաքի մէջ ՄԱԿի քննիչներուն աշխատանքը խաղաղ ձեւով աւարտելու առաջարկներով:

«Մաֆի»-ի համաձայն, Ասատ Ֆրանսայի մէջ ըսած է, թէ միայն ՄԱԿ իրաւունք ունի քննիչներուն աշխատանքները արժեւորելու:

«Լիուա» նշած է, թէ Լոնտոնի մէջ նախագահ Ասատ ըսած է. «Ոչ իրաքցիները եւ ոչ այլ պետութիւն մը կը փափաքին իրաքի վարչապետը փոխել աներկեան դերակատարութեամբ»:

Իրաքեան հարցին առջնութեամբ «Մուսթաքպալ» գրած է, թէ Ուաշինկթըն կը պատրաստուի իրաքի դէմ պատերազմ յայտարարելու: Կը նախատեսուի, որ Պուշ հաստատեց, թէ իրաք խախտած է ՄԱԿի Ապահովական խորհուրդի թիւ 1441 բանաձեւը:

«Լիուա»-ի համաձայն, իրաքի թղթածրա-

րին մասին Ուաշինկթըն իր ծիտական արժեւորումը պիտի փոխանցէ ՄԱԿի Ապահովական խորհուրդին:

Ըստ «Տիար»-ի, իրաքի փոխ վարչապետ Ազիզ Կարէմը մինչեւ մեր վերջին պիտի մնայ:

«Մաֆի»-ի համաձայն, Ասատ Ֆրանսայի մէջ ըսած է, թէ Ֆրանսայի հետ համակարգում կը կատարուի իրաքի մէջ ՄԱԿի քննիչներուն աշխատանքը խաղաղ ձեւով աւարտելու առաջարկներով:

«Մուսթաքպալ» գրած է, թէ Սուրիոյ նախագահը յայտնած է, թէ Ֆրանսայի հետ համակարգում կը կատարուի իրաքի մէջ ՄԱԿի քննիչներուն աշխատանքը խաղաղ ձեւով աւարտելու առաջարկներով:

«Մաֆի»-ի համաձայն, Ասատ Ֆրանսայի մէջ ըսած է, թէ միայն ՄԱԿ իրաւունք ունի քննիչներուն աշխատանքները արժեւորելու:

«Լիուա» նշած է, թէ Լոնտոնի մէջ նախագահ Ասատ ըսած է. «Ոչ իրաքցիները եւ ոչ այլ պետութիւն մը կը փափաքին իրաքի վարչապետը փոխել աներկեան դերակատարութեամբ»:

Իրաքեան հարցին առջնութեամբ «Մուսթաքպալ» գրած է, թէ Ուաշինկթըն կը պատրաստուի իրաքի դէմ պատերազմ յայտարարելու: Կը նախատեսուի, որ Պուշ հաստատեց, թէ իրաք խախտած է ՄԱԿի Ապահովական խորհուրդի թիւ 1441 բանաձեւը:

«Լիուա»-ի համաձայն, իրաքի թղթածրարին մասին Ուաշինկթըն իր ծիտական արժեւորումը պիտի փոխանցէ ՄԱԿի Ապահովական խորհուրդին:

Ըստ «Տիար»-ի, իրաքի փոխ վարչապետ Ազիզ Կարէմը մինչեւ մեր վերջին պիտի մնայ:

«Մաֆի»-ի համաձայն, Ասատ Ֆրանսայի մէջ ըսած է, թէ միայն ՄԱԿ իրաւունք ունի քննիչներուն աշխատանքները արժեւորելու:

Panasonic

45 YEARS National Panasonic Technics

DVD-RA61 DVD-AV Player 5.1-ch, MP3, JAPAN \$ 6,500
Worth: \$ 465

42" PLASMA [tau] \$ 9,500

50" PLASMA [tau] \$ 9,500

SC-HT75 One Package Home Theater with 5 DVD, MP3 Worth: \$ 495

FREE

SC-AK600 3200W, 5 CD, Dolby Digital \$ 300

RF-NA030 AM/FM Ultra Slim Pocket Radio Worth: \$ 38

FREE

TX-34P150X 34" 100Hz, Text, RGB \$ 1,410

RE-WS10 Worldspace Receiver Worth: \$ 180

FREE

TX-51P250X 51" 100Hz, PIP, Text, JAPAN \$ 2,950

TX-43P250X 43" 100Hz, Text, RGB \$ 2,250

SC-AK600 Mini Compo 3200W, 5 CD Dolby Digital Worth: \$ 300

FREE

Bring in your National Panasonic Technics TV, VCR, Movie Camera, Mini Compo, DVD, Portable Audio or Kitchen Appliance to our Service Center and get up to 45% discount on parts and labor. Valid from November 1 to 21, 2002, on products imported by Tutunjian Corp. S.A. Subject to availability of parts.

These offers are valid from **November 1, 2002 to January 31, 2003**

only on products guaranteed by TUTORJIAN CORP. S.A. 04/712129-130, 711967, 03/243203 Fax: 04/712177, E-mail: TTC@cyberia.net.lb

Up To **45% DISCOUNT** Add 10% VAT on above prices

ԱՖՀԻԼ AFHIL

ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ

RENT AND SALE

AT HOME

- Wheelchair
- Walker
- Electric Bed
- Manual Bed
- Water Mattress
- Cans
- Sticks
- Serum Tripod
- Walking Frame

HOME MEDICAL EQUIPMENT SERVICES

- Over Bed Table
- All Kinds Of Oxygen

We Also Provide

- Laboratory services
- Physiotherapist
- Nurses Aids
- P.T.S. (AMBULANCE)

ՅՈՒՑԱՍՐԱԸ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆՁԸՐ ԳՐԱՏԵՆԵԱԿ՝ ԱՖՀԻԼ, ԱՖԵՏԻ ՇԵՆՔ, Բ. ՅԱԿ ԵՆՈ. (02) 242556/7

NO MATTER WHAT YOU NEED... ... OR WHERE YOU NEED.

IGOL MOTOR OIL

FUEL CARD

ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

ՇԱՅ ԴԱՏ

ՇԱՅ ԴԱՏ

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԽՆԴԻՐԸ ՔԻՉ ՄԸ ՏԱՐԲԵՐ Է»

Կ'ԸՍԷ ՌՈՒՏՈՒՑ ՓԵՐԻՍԱ

ԵԱՀԿի Մինսքի խմբակի ամերիկացի նախագահ Ռուստոֆ ֆերինս վերջերս հարցազրույց մը ունեցած է ռուսական «Էխո Մոսկվի» ռատիոկայանին հետ, որուն ընթացքին ընդհանրապես անդրադարձած է միջազգային ճանաչում չունեցող չորս հանրապետություններու՝ Մերձստրիկալիայի, Աբխազիայի, Հարավային Օսեթիայի եւ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակներուն եւ անոնց վերաբերող հարցերու: Լրագրող Մ. Կանափոլսքի ընդգծելով, թէ այս շրջաններուն մէջ բնակող մարդիկը կ'ուզեն ինքնավարութիւն կամ անկախութիւն ստանալ, հարց տուած է, թէ ի՞նչ է Միացեալ Նահանգներու դիրքորոշումը այս ուղղութեամբ: Փերինս պատասխանած է, թէ Մերձստրիկալիայի, Աբխազիայի եւ Օսեթիայի պարագային պէտք է գտնուին լուծումներ՝ շատ լայն ինքնավարութիւններ (Մերձստրիկալիայ՝ Մոլդովիայի, իսկ Աբխազիան եւ Օսեթիան՝ Իրանի կարգին մէջ), պէտք է հաստատուին անվտանգութեան միջազգային լիարժէք երաշխիքներ: «Կրկնեմ, որ միջազգային ընտանիքը պատրաստ չէ ճանչնալու ո՛չ Հարավային Օսեթիայի, ո՛չ Աբխազիայի եւ ոչ ալ Մերձստրիկալիայի անկախութիւնները Լեռնային Ղարաբաղի խնդիրը քիչ մը տարբեր է: Տարածքային լուծման շուրջ Հայաստանի եւ Ազրպէյճանի միջեւ բանակցութիւնները կը շարունակուին: Քանի որ տակաւին չկայ որեւէ որոշում՝ բխած այդ բանակցութիւններէն, միջազգային ընտանիքը զօրավիճ է Ազրպէյճանի տարածքային ամբողջականութեան գաղափարին եւ չի ճանչնար Լեռնային Ղարաբաղը», դիտել տուած է ամերիկացի դիւանագէտը:

ԱԶՐՊԵՅՃԱՆ

ՈՉ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՅԻՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐ ԿԸ ՍՏՈՐԱԳՐԵՆ

Նուժը մը ազրպէյճանական ոչ կառավարական կազմակերպութիւններ, որոնց գործունէութիւնը ուղղակի կամ անուղղակիօրէն կ'առնչուի Լեռնային Ղարաբաղի, վերջերս ստորագրած են գործակցութեան համաձայնագիր մը: Անոնք յայտնած են, թէ չեն արտօներ, որ Ազրպէյճան Լեռնային Ղարաբաղի հարցին գծով ստորագրէ ազերիներու շահերը չպաշտպանող համաձայնագիր մը: Ըստ Ազրպէյճանի «Կադէք 525» թերթին, նշեալ համաձայնագիրը ստորագրած են Ազրպէյճանի Ազատութեան եւ տարածքային ամբողջականութեան կամաւորական միաւորումը, «Ամալ» մտաւորական շարժումը, «Ղարաբաղի Ազատագրութեան կազմակերպութիւն»ը, «Լաչին» միութիւնը, Ազգային դեմոկրատական կուսակցութիւնը, Ազգային Դիմադրութիւն շարժումը, զո՛ւտածներու ընտանիքներու պաշտպանութեան կազմակերպութիւնը եւ այլ միութիւններ ու կազմակերպութիւններ:

Թերթը կը գրէ, թէ համաձայնագիրը ստորագրողներէն արհեստագիտութեան կեդրոնի տնօրէն Մուսաբալազ Ամալտոյի յայտարարած է. «Յոյսով եմ, որ կը յաջողինք ազերի հասարակութեան ուշադրութիւնը հրաւիրել հայ-ազրպէյճանական հակամարտութեան լուծման վրայ»:

ՀԱՅԵՐՈՒՎԱԿԱՆ ՎՐԱՑԻՆԵՐՈՒ ԵՒ ՄԵՍԻՆԵԹ ԹՈՒՐՔԵՐՈՒ ՄԻՋԵՒ ՀԱՆԴՊՈՒՄ

«ՄԱԿի կամաւորներ» կազմակերպութեան նախաձեռնութեամբ, «Խաղաղ նախաձեռնութիւն» մեսիսթներ-վրացիներ-հայեր» ծրագրի ծիրէն ներս 9-11 Դեկտեմբերին Զաւախքի եւ մեսիսթի թուրքերու ոչ կառավարական կազմակերպութիւններու ներկայացուցիչներուն միջեւ հանդիպում մը տեղի ունեցաւ: Հանդիպումին նպատակը մեսիսթ թուրքերու, վրացիներու եւ հայերու միջեւ յարաբերութիւններու բարելաւումն էր: Հանդիպումին հրաւիրուած էին չորս վրացական, երկու հայկական եւ մեսիսթ թուրքերու չորս ոչ կառավարական կազմակերպութիւններ: Հանդիպումին ընթացքին մեսիսթ թուրքերու «Փաթրիա» միութեան նախագահ Քլարա Պարաթաշվիլի գործակցութեան տարբերակներու վերաբերեալ կատարուած առաջարկներու ծիրէն ներս շեշտեց մեսիսթ թուրքերու վերադարձի անհրաժեշտութիւնը: Միւս կողմէ, սակայն, Զաւախքի վրացիներու եւ հայերու կազմակերպութիւնները կրօնական, ցեղային, կենցաղային, հողային եւ այլ մտահոգութիւններ նկատի առած, նպատակայարմար չգտան մեսիսթ թուրքերու անմիջապէս վերադարձը շրջան: Հանդիպումին աւարտին առաջարկուեցաւ ստեղծել մեսիսթ թուրքերու եւ Զաւախքի հայերու ու վրացիներու կազմակերպութիւններու աշխատանքները համակարգող խորհուրդ մը:

«ԱԶԳԱԿ»-ի ՀԵՌՆԱՅԻՆ ԹԻՒՒՐԿԵՐՈՒ
 Ա.Զ.ՂԱԿ-ի հետ կապուելու համար հեռախոսելու հետեւեալ թիւերու. - 258526, 260115 եւ 241274:

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԱՍՈՒԼ

ԹՈՒՐՔԻԱ ՊԵՏՔ Է ՃԱՆՉՆԱՅ ՆԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Գերմանական «Տալվեր» թերթի 12 Դեկտեմբերի համարին մէջ լոյս տեսած է յօդուած մը՝ «Եթէ Թուրքիա կ'ուզէ պատկանել Արեւելեան Եւրոպայի, պէտք է ժխտէ մուսուլմանական, պէտք է ժխտէ իսլամական, պէտք է ժխտէ իսլամական թուրքերը»: Թերթը շարունակում է. «Պարսկական արեւմուտեան պետութիւնն է, որովհետեւ հոն ունի մէկը կրնայ ազատ եւ բացառապէս իսլամական յայտօրէն խօսել անկախութեան ի խնդիր Ալ-ճերիդի մղած պատերազմի ընթացքին ի գործ դրուած տանջանքներուն մասին: Միացեալ Նահանգներ արեւմտեան երկրն է, որովհետեւ իւրաքանչիւր ղարցական

երեսայն տեղեկ է հնդկ-նեբրու կոտորածներուն մասին: 1915ին օսմանցիները իրագործեցին առաջին ցեղասպանութիւնը. սպանուեցան 1,5 միլիոն հայ տղամարդիկ, կին, երեխայ: Այս ցեղասպանութիւնը լաւապէս փաստագրուած է գերմանացի գրող Արմին Թ. Վակ-հեյրի, ամերիկացի դեսպան շէյնրի Մորկըն-թաուի, աւստրիացի գինեւորական բանագնաց Պոմիսնովսկիի ակնարկներով, ընդգծած է Հանս Եթէյն իր յօդուածին մէջ: «Սակայն Հայկական Ցեղասպանութիւնը քաղաքացիական ճիշդ է, հետեւ-

աւար իրագործելի է Թուրքիոյ մէջ ապրող այլ ժողովուրդներու դէմ եւ», աւելցուցած է Եթէյն: Յօդուածին վերջաւորութեան Հանս Եթէյն կը շեշտէ, թէ Գերմանիա, որ իր պատմութեան ընթացքին գործած է ամէնէն ահաւոր ցեղասպանութիւնը, պէտք է ճանչնայ Հայկական Ցեղասպանութիւնը՝ իր ճակատէն սրբելու համար ամօթի խարանք, մանաւանդ որ իր պատմութեան գինեւորականներ Ա. Ալխարհամարտին օժանդակած են Թուրք պաշտօնատարներուն՝ Հայկական Ցեղասպանութեան իրագործման համար:

ՉԱՒԱՔԻ ՄԷՉ ՎՐԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՐԿՈՒՄԻ ՆԱԽԱԳԻԾԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

12 Դեկտեմբերին Ախալցխա քաղաքի «Հորիզոն» հիմնադրամի գրասենեակին մէջ տեղի ունեցաւ Վրաստանի խորհրդարանի Ազգային փոքրամասնութիւններու կոմիտէին կողմէ պատրաստուած Վրաստանի ազգային փոքրամասնութիւններու համաժողովի քաղաքականութեան հայեցակարգին վերաբերող նախագիծին քննարկումը: Քննարկումին մասնակցեցան Զաւախքի վրացիներու եւ հայերու ոչ կառավարական կազմակերպութիւններ: Քննարկումին ընթացքին Վրաստանի Ազգային փոքրամասնութիւններու համաժողովի կոմիտէի նախագահ Պետրոս Լակվիաւա, փոխ նախագահ Տալի Ապաշիծէ եւ

անդամ Ռեգո Միշվիլիձէ մանրամասնօրէն ներկայացուցին նախագիծը: Յատուկ անդրադարձ կատարուեցաւ հայեցակարգին մէջ տեղ գտած ազգային փոքրամասնութիւններու համար կուսակցական, կրթական, ընկերային-տնտեսական, հասարակական-քաղաքական եւ դատական քաղաքականութեան: Նշուեցաւ, որ հայեցակարգին նախագիծը քննարկուած է նաեւ ԵԱՀԿի եւ ՄԱԿի կողմէ կազմակերպուած խորհրդաժողովներու ընթացքին:

Նախագիծը՝ առաջարկեցին նախագիծի որդեգրումէն առաջ վերատեսուելու ենթարկել անոր մէջ տեղ գտած կարգ մը լեզուական, կրթական, քաղաքական եւ տնտեսական կէտերը, ինչպէս նաեւ՝ ազգային փոքրամասնութիւններու փորձագէտ-ներկայացուցիչներու կարծիքը նկատի առնել: Աւելի ուշ նոյնպիսի քննարկում մը տեղի ունեցաւ Զաւախքի մէջ Վրաստանի նախագահի լիազօր ներկայացուցիչի աշխատակազմի շէյնքին մէջ: Քննարկումին մասնակցեցան Զաւախքի շրջաններու կառավարման մարմիններու ներկայացուցիչները եւ շրջանէն ընտրուած վրաստանի խորհրդարանի պատգամաւորները:

ԹՈՒՐՔ ԳՈՐԾԱՐԱՐԱՐԸ ԿԸ ԾԵՇՏԷ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԻ ԲԱՑՈՒՄԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ

Հայ-թրքական տնտեսական զարգացման խորհուրդի պատասխանատուներէն Պեթրոս Քուրբանի Պարթի «Կադէք 525» թերթին վերջերս յայտնած է, թէ Թուրքիոյ Եւրոպական Միութեան անդամակցութեան տեսանկիւնէն կարելի չէ ստանալ Հայաստանի սահմանի բացումին անհրաժեշտութիւնը: «Մենք կը ձգտինք այդ շրջանին մէջ փոխյարաբերութիւնները զարգացնել, եւ հայ-թրքական սահմանի բացումը այդ գծով մեծ դեր կը խաղայ: Երկրներու միջեւ կապերու զարգացումը կը նպաստէ խաղաղութիւն եւ համաձայնութիւն ձեռք բերելու», ըսած է Քուրբանի: Ան նշած է, թէ մինչեւ օրս Թուրքիային (մասնաւորաբար ի գործի) գործարարներ այցելած են Հայաստան, ուր ստորագրած են քանի մը համաձայնագիրներ: Սակայն Քուրբանի այդ համաձայնագիրները անընդհանրապէս չեն նկատուած է եւ յայտնած է, թէ հակառակ ներդրումներու համար անհրաժեշտ է քաղաքական հիմք: «Մեր նպատակը քաղաքական համաձայնագիրներու նպատակներն է», ըսած է Թուրք

գործարարը: Ըստ «Արմինֆո»-ի, Քուրբանի յայտնած է, թէ Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ տարեկան առեւտրական շրջանառութիւնը կը կազմէ 7 միլիոն տոլար, որուն մէջ մեծ մաս կը կազմեն Թուրքիայէն Հայաստան արտածուածները: Ան նշած է, թէ Միջազգային գրաստանի հաշիւներով, քաղաքական հարցերու բացակայութեան պարագային, Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ առեւտրական շրջանառութեան ծաւալը կրնար հասնել տարեկան

300 միլիոն տոլարի, եւ Հայաստանի ազգային եկամուտը կրնար 60 առ հարիւր յաւելում արձանագրել: «Հայաստանի փազանց սահմանափակ շուկայ ունենալով՝ Թուրքիոյ համար գրաւիչ չէ ո՛չ արտադրութեան, ոչ ալ միջազգային հեղինակութեան տեսանկիւնէն», ըսած է Թուրք գործարարը: Ան աւելցուցած է, թէ Թուրքիա Հայաստանի համար ելք է դէպի Եւրոպա, իսկ Հայաստան Թուրքիոյ համար՝ ելք՝ դէպի Ազրպէյճան:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ Ս. ՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑՒՈՅ

ՇՆՆԱՐԿՈՒԹԵԱՄԸ՝ ԱՐԸ. Ը. ՅՈՎՀԱՆՆԵՍ ԵՊՍ. ԹԵՅՐՈՒՉԵԱՆԻ (Օգնական եպս. Լայ Կաթողիկ պատրիարքարանի)

Նախագահութեամբ՝ ՏԻՐ ԵՒ ՏԻԿ. Մ. ՍԵՐԺ ԹՈՒՐՍԱՐԳԻՍԵԱՆԻ (Երեսփոխան)

ԾՆԱԴԵԱՆ ԵՒ ԱՄԱՆՈՐԻ ՇՆՆԱՐԿՈՒԹԵԱՄԸ՝ «ՔՐՈՒՆ» ԵՒ «ԱՐՄԻՆԱ» ԵՐԳՈՒՄՈՒԹԵՐՈՒՆ ԴԵԿԱՎՐԱՍ

ՍԱՆՈՒԷԼ ԲԵԺՈՇԵԱՆ

Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 20 Դեկտեմբեր 2002, երեկոյեան ժամը 8:00ին, «Յովհաննէս Պողոսեան» քառերարահիմն մէջ, Պուրճ Համուտ:

ՊԱՔՈՒՆ Ա. ՂՈՒԿԱՍԵԱՆԸ ՊԻՏԻ ՀԵՏԱՊՆԴԷ ԻՆԹԵՐՓՈՒԼ ՄԻՋՈՑՈՎ...

Ազրպէյճանի արտաքին գործոց նախարար Վիլայիթ Կուլիբե պաշտօնապէս յայտարարած է, թէ իր երկրին իշխանութիւնները մտադիր են Լեռնային Ղարաբաղի նախագահ Արկարի Ղուկասեանի դէմ միջազգային հետապնդման ձեռնարկել ինքնուրուի միջոցով: Անդրադառնալով Ա. Ղուկասեանի Ֆրանսա եւ Միացեալ Նահանգներ կատարած վերջին այցելութիւններուն՝ Կուլիբե դիտել տուած է, թէ՛ «այդ մարդուն մուտքի վիզա տրամադրել իսկ սխալ քայլ է»՝ աւելցուցած է, թէ Միացեալ Նահանգներու եւ Ֆրանսայի քաղաքացիներու կողմէ Լեռնային Ղարաբաղին նիւթական աջակցութիւնը չի նպաստեր տագնապին լուծման:

«Նեղալիսիմայա Կաթեթա» թերթը Վիլայիթ Կուլիբեի այս յայտարարութիւնը նկատած է Ազրպէյճանի մէջ նախագահական ընտրութիւններու քաղաքական ընթացքին Լեռնային Ղարաբաղի «խաղաքարտ» օգտագործելու Պաքուի իշխանութիւններուն ցանկութեան ցուցանիշ:

ՀԱՅ ԴԱՏԻ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԸ ՊԻՏԻ ՊԱՏՈՒԷ ՔԱԼԻՖՈՐՆԻՈՅ ԱՄԵՐԻԿԱԿԱԿԱՅ ՕՐԵՆՍԳԻՐՆԵՐԸ

Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբը յայտարարեց, թէ 6 Յունուար, 2003ին, Սաքրամենթոյի մէջ յատուկ ընդունելութեամբ պիտի պատուէ նահանգի օրէնսդիր մարմիններու ամերիկահայ անդամները:

Ընդունելութիւնը տեղի պիտի ունենայ նահանգապետ Կրէյ Տէյվիսի երկրորդ պաշտօնավարութեան երդման արարողութեան օրը:

Յանձնախումբի ընդունելութեան ներկայ պիտի ըլլան նահանգի գործադիր իշխանութեան պաշտօնատարներ, ինչպէս նաեւ՝ նահանգային խորհրդարանի եւ ծերակոյտի անդամներ:

Նշենք, որ Նոյեմբերի ընտրութիւններուն իբրեւ արդիւնք, նահանգի օրէնսդիր իշխանութեան մէջ ամերիկահայերու թիւը կրկնապատկուեցաւ, ինչ որ աննախնթաց է նահանգի պատմութեան մէջ:

ԱՐԱՄ ՀԱՄԱՐԵԱՆ ԿԸ ՀԱՆԴԻՊԻ ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՀԵՏ

Միացեալ Նահանգներու Հայ Դատի Յանձնախումբի Ուաշինկթընի գրասենեակի տնօրէն Արամ Համարեան կիրակի, Դեկտեմբեր 8ին, ելոյթ ունեցաւ Հ. Յ. Դ. Արեւմտեան Ամերիկայի Կեդր. Կոմիտէի «Փէլ-չէքերեան» կեդրոնին մէջ, Կլինտոնի:

Ձեռնարկը կազմակերպուած էր Հայ Դատի Յանձնախումբի նորաստեղծ Արհեստավարներու յանձնախումբին, Հ. Ե. Դ. եւ Հ. Ե. Դ. «Շաւթ» ուսանողական միութեան կողմէ:

Արամ Համարեան իր ելոյթին ընթացքին անդրադարձաւ ամերիկահայութեան քաղաքական գործունէութեան՝ խօսելով Հայ Դատի հետապնդման մէջ «Միսթրմ Եթէյն»-ի օրը երաժշտութեան խումբին եւ Աթոմ Էլոյեանի «Արարատ» ժապաւէնին խաղացած կարեւոր դերին մասին:

Համարեան խօսեցաւ նաեւ Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբի Ուաշինկթընի գրասենեակի աշխատանքներուն մասին: Ան յատկապէս նշեց այն աշխատանքը, որ կը տարուի Միացեալ Նահանգներու կողմէ Հայկական Ցեղասպանութեան ճանաչման, ինչպէս նաեւ՝ Հայաստանի եւ Ղարաբաղի ամերիկեան յարաբերում օժանդակութեան պահանջները համար կատարուած աշխատանքը: Նշենք, որ Դեկտեմբեր 10ին Համարեան ելոյթ ունեցաւ նաեւ Մոնթեպելլոյի Հայ Կեդրոնին մէջ:

ԷՔՍՈՒԵՐԹԻ ՏԱՐՈՒԱՆ ՔԱՆԱՏԱՅԻՆ

Թորոնթոյի Հայ Դատի յանձնախումբին նախաձեռնութեամբ, Նոյեմբեր 21ին Թորոնթոյի հայկական գաղութի կեդրոնին մէջ տեղի ունեցաւ պաշտօնական հանդիսութիւն մը, որուն ընթացքին նախկին նախարար Լոյս Էքսուերթի պատուընեցաւ իբրեւ տարւան քանատացի մարզը: Հանդիսութեան ներկայ էին փոխարքայապետներու նախարար Տէյվիտ Քոնլէյթ, ինչպէս նաեւ՝ երեսփոխաններ եւ քաղաքապետներ: Նախարար Քոնլէյթ, որ իր ելոյթին ընթացքին անդրադարձաւ Էքսուերթի հայաստան աշխատանքներուն եւ գործունէութեան, 1915ի դէպքերը որակեց ցեղասպանութիւն: Էքսուերթի, իր կարգին, յիշեց շիթլէրի խօսքերը, թէ՛ «Հիմա ո՛վ կը լինէ հայերը»: Ան դիտել տուաւ, որ Հիթլէր Ողջակիցութեան ձեռնարկելու քաղցրութիւնը ունեցաւ, որովհետեւ Հայկական Ցեղասպանութիւնը մտցուած էր: Էքսուերթի աւելցուցաւ, որ հայերը Ցեղասպանութեան ճանաչման աշխատանք տանելով՝ աշխարհին կոչ կ'ուղղէին, որ ուշադիր ըլլայ:

Հանդիսութեան աւարտին Էքսուերթի եւ նախկին նախարար Քոնլէյթ ծաղկեպսակ մը գետեղեցին հայկական կեդրոնին կից Ցեղասպանութեան զոհերու յուշարձանին:

www.hamaskayin.com

7րդ Արուեստ



«ՀԵՐԻ ՓՈԹԸՐ ԷՆՏ ՏԸ ՉԷՅՄՊԸՐ». ՏՊԱՒՈՐԻՉ ԲԵՄԱԴՐՈՒԹԻՒՆ, ՍԱԿԱՅՆ ՏԱՐԻՔՈՎ ԱՒԵԼԻ ՄԵԾ ՀԱՆԴԻՍԱՏԵՄՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Երկու տարի է ի վեր շարժապատկերի աշխարհին մէջ իր մասին խօսել տուող Հէրի Փոթըրը սօնական եղանակի նախօրեակին մեծ պատահաւ կը վերադառնայ դէմքի աւելի վճռական արտայայտութեամբ եւ... սուրով: Անգլիացի վիպագիր ձէյ.Քէյ. Ռոլինկի հատորներու շարքին երկրորդին՝ «Հէրի Փոթըր էնտ տը չէյմպըր աֆ սիքըրթց» գիրքին հիման վրայ պատրաստուած այս համանուն ժապաւէնին որոնք մարտի 10-ը սուրբ Բէյ կը կարգայ տարուան նոյն շրջանին ամերիկեան եւ եւրոպական



դրուող «Լորտ աֆ տը ռինկզ» ժապաւէնին երկրորդ մասին, ուր սուրբ Բէյ պայքարը հերոսներ են: Որմագրին վրայէն իր մանուկ եւ պատանի հանդիսատեսներուն համաձայն, ձէյ.Քէյ. Ռոլինկի «Հէրի Փոթըր» շարքին գիրքերը հետզհետէ կը դառնան աւելի մութ ու սարսփազդու, եւ անոնց ժապաւէնները հաւատարմօրէն կը փոխանցեն նոյն տրամադրութիւնը: Այս երկրորդ ժապաւէնին մէջ, տխուր ամառ մը անցընելէ ետք Հէրի Փոթըր կը վերա-

դառնայ կախարդութեան Հոկըրթ դպրոցը: Սակայն ան բազմիցս կը զգուշացուի թզուկ Տոլպիին կողմէ, թէ նոր տարեշրջանը իրեն հետ պիտի բերէ դժբախտ պատահարներու շարք մը, որ կը սկսի կախարդական շոգեկառք փախցընելով, թուող հին ինքնաշարժ մը մարդոց կողմէ տեսանելի ըլլալէ ետք դպրոցին անհիւրընկալ ունենիին կողմէ ալ ու ձախ նետուելով, միջանցքին մէջ երեւութապէս սատկած կատու մը եւ արիւնոտ գրուածքները:

տայայտութիւն է իր իսկ բեմագրիչ Քրիս Քոլումպոսին կողմէ կատարուած հետեւեալ յայտարարութիւնը. «Կարելո՞րուծեամք կը զգուշացընեմ եօթը տարեկանէն վար զաւակներ ունեցող ծնողները, որ նախապէս տեղեկ ըլլան, թէ ինչ է իրենց դիտելիքը»:

Իր ամբողջութեան մէջ «Հէրի Փոթըր էնտ տը չէյմպըր աֆ սիքըրթց» կու տայ այն, ինչ որ մանուկ ու պատանի հանդիսատեսները կ'ուզեն: Անոնք դժուար կացու-



արահներու մէջ ցուցա-


«ԱՐԱՐԱՏ» ՈՒԹ «ՃԵՆԻ»ՆԵՐՈՒ ԹԵԿՆԱԾՈՒ

Քանատական շարժապատկերի եւ պատկերասփիւռի կազմակերպիչ «Ճենի» մրցանակաբաշխութեան թեկնածուներու ցանկին գագաթը կը գրաւէ Արարատ Էկոյանի «Արարատ»ը, որ «Ճենի» մրցանակի թեկնածուներ կայացած է ութ մարզի մէջ: Առաւելագոյն թեկնածութիւններու իմաստով, «Արարատ»ին

կը յաջողեն «Սեվէյճ Մը սայա» (եօթը թեկնածութիւն), «Սփայտըր» եւ «Սատըլի նէյթըտ» (վեցական թեկնածութիւններ) ժապաւէնները:

«Արարատ» թեկնածու է լաւագոյն ժապաւէնի, լաւագոյն գլխաւոր դերասանի, լաւագոյն գլխաւոր դերասանուհի, լաւագոյն երկ-

րորդական դերասանի, լաւագոյն բեմագրութեան, լաւագոյն երաժշտութեան, լաւագոյն գեղարուեստական բեմադրիչ-արտադրիչի եւ լաւագոյն տարագրութեան մրցանակներուն: Նշենք, որ «Ճենի» մրցանակաբաշխութիւնը տեղի պիտի ունենայ Թորոնթոյի մէջ, 13 Փետրուարին:



րով ծածկուած պատեր տեսնելով...: Եւ սարսփազդու պատահարները կը շարունակուին ժապաւէնին իւրաքանչիւր վայրկեանին հետ աւելի սաստկացնելով իրենց տարողութիւնը՝ հասնելու մինչեւ իր սուրբով արիւն թափող եւ... անկէ յայտնապէս հաճոյք զգացող հերոսը պատկերող տեսարաններու:

Աւելի քան երկու ժամ տեւողութեամբ (162 վայրկեան) մանուկներու եւ պատանիներու սահմանուած այս երկար ժապաւէնը կը յաջողի իրեն կապել ու ցնցել փոթըրմանիայով կլանուած մանուկները: Գիրքին առաւելագոյն չափով հարազատ մնացած «Հէրի Փոթըր էնտ տը չէյմպըր աֆ սիքըրթց» ժապաւէնը յայտնապէս սահմանուած է պատանի հանդիսատեսներուն համար: Ժապաւէններու տարիքային դասակարգման բրիտանական ցուցատախտակին կողմէ «որոշ տեղեր փողոցային լեզու եւ սարսփազդու տեսարաններ ունեցող» ժապաւէնը դասակարգուած «Հէրի Փոթըր» կը դիմագրաւէր տասներեք տարեկանէն վեր եւ ծնողներու հսկողութեամբ դիտուող ժապաւէններու շարքին անցնելու «վտանգ»ը, բայց ան լաւ շոգեկառք արտադրութիւնները: Մինչեւ յայտնապէս հաճոյք զգացող Հէրի Փոթըր եւ իր ընկերները պիտի մեծնան: Արդեօք անոնց հետ պիտի մեծնա՞յ նաեւ ժապաւէնին հանդիսատեսներուն միջին տարիքը:

Սոր Ժապաւէն

Տօնական օրերու նախօրեակին լիբանանեան շարժապատկերի սրահները լայն տեղ կը յատկացնեն մանուկներու յատուկ, ինչպէս նաեւ տօնական մթնոլորտ փոխանցող ժապաւէններու: Երկարատեղէն ի վեր սպասուած «Հէրի Փոթըր էնտ տը չէյմպըր աֆ սիքըրթց» ժապաւէնին կողքին, կը ցուցադրուին հետեւեալները:

«ՍԱՆՁԱ ԲԼՈՉ 2» Բեմադրիչ՝ Մայքըլ Լեմպը



Կատակերգական այս ժապաւէնով Թիմ Էլըն գարծալ մեծ պատահով վրայ կը վերածուի Կաղանդ Պապայի: Սքոթ Քելվին վերջին տարիներուն յաջող Կաղանդ Պապա եղած է, եւ իր թողուկները զինք կը նկատեն լաւագոյնը: Սակայն Կաղանդ Պապային համար դժուարութիւններ կը սկսին, երբ ան կը սկսի անբացատրելի կերպով նիւթերու ցանցերու ցանցեր կը գտնուի... չարաճեցողութեան ցանցերու մէջ: Իսկ Կաղանդ Պապային նոր օգնականը ամէն ինչ իրար կ'անցնէ՝ տարբեր ձեւով դասաւորելով բարիներուն ու չարերուն անուկները: Արդեօք Կաղանդ Պապան այս բոլոր հարցերը ինչպէս պիտի լուծէ:

«ՍԵՐՎԻՆԿ ՍԵՐԱ» Բեմադրիչ՝ Ռեմինըլտ Հատլին



Արկածախնդրութեամբ եւ երգիծանքով միախառնուած այս սիրային ժապաւէնին հերոսներն են անգլիացի դերասանուհի Էլիզապէթ Ջորջի եւ «Ֆրեյմուտ» կատակերգական հաղորդաշարին հերոսներէն Մէթիու Փերի: Գործի եւ նիւթական դժուարութիւններ դիմագրաւող ձոյի համար Սերա կը բանայ նոր առիթներու դուռը՝ պարզապէս խնդրելով երիտասարդ փաստաբանէն, որ օժանդակէ իր մեծահարուստ ամուսինէն ամուսնալուծման հարցին:

«ՌԵՅՆ ԱՅ ՅԱՅԸՐ» Բեմադրիչ՝ Ռոպ Պուսըն

Լոնտոնի մէջ շինարարական աշխատանքներու խմբակ մը կ'արթնցնէ գետնին տակ հարաւոր տարիներէ ի վեր բնացած վիշապը կը գտնուի վիշապին տիրապետութեան տակ: Կրակէն ու անբերքէն ազատուած միայն գետնին տակ պահուած մարդիկ, որոնց մաս կը կազմէ Գուլի (Քրիսթիան Պէյլ): Ան կ'որոշէ ամէն գնով մարդկութիւնը փրկել վիշապին տիրապետութենէն: Ամերիկացի գիւնուորներու հետ անոր գործակցութիւնը ամբողջովին կը յեղաշրջէ կացութիւնը: Գիտաբերական ժապաւէն մը:

«ԼԷ ԹՐՈՒՎ ՄՄԺ» Բեմադրիչներ՝ Տեռտ Պորտոն եւ Պեռնար Քամփան

Ս. ՄԵՆՈՒՄԻՆԻ ԳԻՉԵՐԸ մանուկ Յիսուսին քայլերը հասնելու համար Գեորգի Ելած երեք մոզերը (Տեռտ Պորտոն, Պեռնար Քամփան եւ Փասքալ Լեթիքիմոս) «հրաշք»ով մը իրենք զիրենք կը գտնեն պոստուան փարիզի մէջ: Սակայն անոնք որոշած են ամէն գնով հասնիլ իրենց նպատակակետին եւ նուէրներ գետնել մտորիւն առջեւ: Տօնական մթնոլորտ փոխանցող ֆրանսական կատակերգութիւն մը:

The brand with proven reliability you can count on.

Unrivaled operability, easy-viewing display, beautiful printing.

DR-140N
Heavy Duty

Chic and stylish, it's totally new look in printing calculators!

- 12 digits
- 2-Colour Printing
- Line Printing
- Mark-Up/Mark-Down
- 3.5 Line-per-Second Printing
- Regular Percent

DR-120LB
Desk-top Type

Design printer with a big, easy-to-read Best View display

- 12 digits
- 2-Colour Printing
- Big Printing
- Mark-Up/Mark-Down
- 3.0 Line-per-Second Printing
- Regular Percent

FR-2650A
Desk-top Type

A full lineup featuring models for every business environment

HR-8TE
Mini Printer

Big, Easy-to-read display

- 12 digits
- 1.6 Line-per-Second Printing
- Tax & Exchange Function
- Profit Margin Percent
- Big Display

DR-8420V
Heavy Duty

High-speed 3.6 line-per-second printing

- 14 digits
- 2-Colour Printing
- Line Printing
- Mark-Up/Mark-Down
- 3.6 Line-per-Second Printing
- Regular Percent

DR-8620
Heavy Duty

High-speed 4.6 line-per-second printing

- 16 digits
- 2-Colour Printing
- Line Printing
- Mark-Up/Mark-Down
- 4.6 Line-per-Second Printing
- Regular Percent

CASIO COMPUTER CO., LTD.
Tokyo, Japan

ELECTRONIC OFFICE SUPPLIES S.A.R.L.
CASIO DISTRIBUTOR IN LEBANON:
Fanar-Phone: 01/891785.895122.897710
New Jdeidet-Phone: 01/883550.899003
Fax: 01/897711 P.O.Box: 90763 jdeidet
E-mail: eos@dm.net.lb

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն



ԱՇԽԱՐՀ



Հ. Մ. Ը. Մ. Ի ՖՈՒԹՊՈՒԼԻ ՀԱՄԱԿԻՐՆԵՐՈՒՆ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Լիբանանի ֆուտբոլի Բ. դասակարգի ախոյեանութեան ծիրէն ներս, Շաբաթ օր ժամը 14:00ին Հ. Մ. Ը. Մ. Նապաթիէի (հարաւ) դաշտին վրայ պիտի կատարէ իր մրցումը, համանուն քաղաքի խումբին դէմ:

Հ. Մ. Ը. Մ. Ի համակիրներուն համար յատուկ օթոպիւսներ պիտի տրամադրուին՝ մեկնելու հարաւ: Օթոպիւսները ճամբայ պիտի ելլեն ժամը 11:00ին, «Շաղպոյեան» կեդրոնի կից կառատունէն, Պուրճ Համուտ:

ԼԻԲԱՆԱՆԻ ՏՂՈՑ Բ. ԳԱՍԱԿԱՐԳԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

Հ. Մ. Ը. Մ. - ՖԻՏԱԱ ՍԱՅՏԱ՝ 72-66

Լիբանանի տղոց Բ. դասակարգի ախոյեանութեան ճրգ հանգրուանի մրցումներուն, երէկ Հ. Մ. Ը. Մ. Ի ներկայացուցչական խումբը արձանագրեց եղանակի իր երկրորդ յաղթանակը, «Ատոմ եւ Սելլա Թնճուկեան» մարզադաշտին վրայ 72-66 արդիւնքով պարտութեան մատնելով Ֆիտաա Սայտան, հակառակ անոր որ այս վերջինը Ա. կիսախաղին մէկ կէտով կը գերազանցէր Հ. Մ. Ը. Մ. Ի 33-32:

Հ. Մ. Ը. Մ. Ի տղաքը իրենց յաղթանակը կերտեցին երրորդ բոքսերին, երբ 25-8 արդիւնքով յառաջացան իրենց մրցակիցին վրայ:

ՎՈՒՊՈՒԼ ԱՆՆԻ ԵՐՐՈՐԴ ԱՆԳԱՄ ԸԼԼԱԼՈՎ ՏԻՏՂՈՍԱԿԻՐ



Միջէլ Մըրի անուն համալիրին մէջ տեղի ունեցող վոլեյբոլի արարական 21րդ ախոյեանութեան մրցաշարքին աւարտականին, եգիպտական Աիլի խումբը առանց դժուարութեան 3-0 արդիւնքով (25-20, 25-18 եւ 25-22) պարտութեան մատնելէ ետք քաթարեան Արապի խումբի՝ տիրացաւ տիտղոսին: Այսպիսով, տիտղոսակիր Աիլի երրորդ անգամ ըլլալով տիրացաւ այս տիտղոսին: Անկախ առաջին անգամ ըլլալով այս տիտղոսին տիրացած էր 1987ին:

Երրորդ դիրքի մրցումին Ռիատի Ղապիր (լիբանանեան խումբ) 3-0 արդիւնքով պարտութեան մը կրեց Լըմէէնի (Պահրէյն):

Լիբանան, որ չորրորդ անգամ ըլլալով կը հիւրընկալէ արաբական այս ախոյեանութիւնը (1994, 1997, 1998 եւ 2002), երբեք չէ կրցած տիտղոսին տիրանալ:

Սակայն հակառակ այդ մէկին, Լիբանան այս անգամ նախորդներէն շատ աւելի լաւ կրցաւ հիւրընկալել այս մրցաշարքը, մասնակցող խումբերուն նկատմամբ աւելի հոգատարութիւն ցուցաբերելով:

ԷՆ. ՊԻ. ԷՅ.

ՈՒՇՈՐՏԵ ԵՒ ՓԻՍԹԸՆՁ՝ ՄԵԾԱԳՈՅՆ ՅԱՂԹԱԿԱՆՆԵՐԸ



Մայքըլ Ճորտըն (ձախից), որ կը փորձէ գերազանցել մրցակից մը

Ստորեւ՝ երէկուան մրցումներուն արդիւնքները. Ուաշինկթըն Ուիզըրտս - Մեմֆիս Կրիզլիզ 118-100
Մայնմի Հիթ - Պոսթըն Սելթիքս 91-81
Ֆիլադելֆիա Սիքսըրս - Միցեսոթա Վուլվզ 99-94
Տիքսոն Փիքըրըզ - Քլիվլենտ Քաւալիըզ 111-106
Շիրակո Պուլզ - Թորոնթօ Ռեփթըրզ 96-83
Օրլանտօ Մեյքը - Եուրա Ճէզ 97-90
Տալաս Մալթրիքս - Տենզիըր Նակէթզ 80-75
Հիուսթըն Ռոքէթզ - Ինտիանա Փէյսըրզ 95-83
Սան Անթոնիօ Սփըրզ - Սիէրըլ Սուփըրսոնթիքս 91-88
Կոլորադօ Սթըյք Ուորիըրզ - Նիւ Օրլինզ 111-106
Փորթլենտ Քրիքլ Պլէյզըրզ - Լոս Անջելըս Բրիքըրզ 97-93

Ստորեւ՝ այսօրուան մրցումներուն յայտագիրը. Լոս Անջելըս Լէյքըրզ - Նիւ Ճըրզի Նէթզ
Սան Անթոնիօ Սփըրզ - Սաքրամենթօ Քրիքլ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՇՐՋԱՆ

ԱՍԻԱՆՏԵԱՆ ԳՕՏԻ	ՑԱՂԹ.	ՊԱՐՏ.
Ֆիլատելֆիա Սիքսըրզ	17	9
Պոսթըն Սելթիքս	16	9
Նիւ Ճըրզի Նէթզ	16	9
Օրլանտօ Մեյքը	14	13
Ուաշինկթըն Ուիզըրտս	12	13
Նիւ Եորք Նիքս	8	14
Մայնմի Հիթ	7	18

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԳՕՏԻ

Ինտիանա Փէյսըրզ	18	7
Տիքսոն Փիքըրըզ	17	7
Նիւ Օրլինզ	17	10
Աթլանթա Շրքս	10	14
Միլուոքի Պաքս	10	14
Շիրակո Պուլզ	9	16
Թորոնթօ Ռեփթըրզ	8	17
Բրիքլենտ Զաւալիըզ	5	22

ԱՐԵՒՍՏԵԱՆ ՇՐՋԱՆ

ՄԻԶԱՐԵՒՍՏԵԱՆ ԳՕՏԻ	ՑԱՂԱՆ	ՊԱՐՏ.
Տալաս Մալթրիքս	22	3
Սան Անթոնիօ Սփըրզ	15	10
Հիուսթըն Ռոքէթզ	14	10
Միցեսոթա Վուլվզ	14	12
Եուրա Ճէզ	12	12
Մեմֆիս Կրիզլիզ	7	20
Տենզիըր Նակէթզ	6	20

ԽՈՒՍՏՐՈՒՄԱՆ ԳՕՏԻ

Սաքրամենթօ Բրիքլ	21	6
Ֆլորիդա Սանզ	14	11
Փորթլենտ Թրէյլ Պլէյզըրզ	13	11
Սիէրըլ Սուփըրսոնթիքս	14	12
Լոս Անջելըս Բրիքըրզ	11	15
Լոս Անջելըս Լէյքըրզ	10	16
Կոլորադօ Սթըյք Ուորիըրզ	9	16

500 ԵԿԵՂԵՑԻՆԵՐ
ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՐԹԵՐՈՒ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ

ԲԱՑ Է 21-25 ԴԵԿՏԵՄԵՐ
Առաւօտեան ժամը 10:00էն երեկոյեան ժամը 7:00:

Կայ Կաթողիկէ Ա. Գրիգոր Լուսաւորիչ - Ս. Եղիա Եկեղեցի, Տեպպաս հրապարակ, Պէյրութ:

ԼԵՒՈՆ ԱՐՈՆԵԱՆ՝ ՊԱՐԱԳԼՈՒԽԻ ԴԻՐՔԻՆ ՎՐԱՅ

Հնդկաստանի Քոա քաղաքին մէջ տեղի ունեցող ճատրակի 20 տարեկանէն վար աշխարհի ախոյեանութեան 12րդ եւ նախաՎերջին հանգրուանի մրցումներուն, Լեւոն Արոնեան սեւ քարերով պարտութեան մատնելէ ետք Կրիշնան այժմ ինը կէտով կը գրաւէ առաջին դիրքը:

11րդ հանգրուանին, հայրենի վարպետը, որ հաւասարութիւն մը արձանագրած էր, իր կատարելիք վերջին մրցումին պիտի փորձէ անպայման յաղթանակ մը արձանագրելով դառնալ աշխարհի ախոյեան:

ՕՏԱՐ ԱԿՈՒՄԲՆԵՐ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԱԾ ՀԱՅՐԵՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻՍՏՆԵՐՈՎ

«Արմէնֆրէս» լրատու գործակալութեան համաձայն օտար ակումբներ, որոնց կարգին՝ Մեթալուրկ Տոնէթցը եւ Քարպատի Լվով (Ուկրաինա) շատ մօտէն հետաքրքրուած են «Բանանց» Երեւանի մաս կազմող Եղիշ Մելիքեանով եւ Սպարտակի մաս կազմող Արա Յակոբեանով: Նշենք, թէ Մեթալուրկ միշտ ալ հայկական այս երկու ակումբներուն հետ գործակցութեան մէջ եղած է:

Ինչ կը վերաբերի «Փիւնիկ» Երեւանի մաս կազմող Արման եւ Արտաւազգ Քարամեաններուն, անոնցմով շատ մօտէն հետաքրքրուած են Ալանիան (Ռուսիա) եւ յունական շատ մը ակումբներ:

ՎԱՆ ԿԱԱԼԻ ՊԱՇՏՕՆԱԶՐԿՈՒՄԸ՝ ՄԻԱԿ ԼՈՒԾՈՒՄԸ

Պարսեւոնայի նախկին մարզիկներէն՝ պրագիցի Ռիվալտօ, երէկ Մատրիտի մէջ հրապարակուող «Մարթա» օրաթերթին հետ իր կատարած հարցազրոյցին ընթացքին ըսաւ, թէ Պարսեւոնայի հարցին միակ լուծումը հոլանտացի մարզիչ Լուիս Վան Կաալի պաշտօնազրկումն է:

Այլապէս ակումբին վիճակը հետզհետէ կը դառնայ վերջի մտահոգիչ եւ խումբին նահանջը կ'արագանայ:

Ռիվալտօ, որ անցեալ Օգոստոսին ազատ փոխանցուածով մը Պարսեւոնայէն միացաւ Ա. Սէ. Միլանի, յայտնեց, թէ նմանօրինակ պարագաներու խումբի մը մարզիչը փոխելը յարմարագոյն լուծումն է:

Անցեալ Կիրակի օր, Պարսեւոնա վերջին երեք տարիներուն իր դաշտին՝ «Նոլաթափ»ի մէջ կրեց իր ամենէն ծանր պարտութիւնը՝ Սելթիքսին: Մրցումէն ետք Պարսեւոնայի համակիրները իրենց ճերմակ թաշկիռակները շարժելով՝ պահանջեցին Խուան Կասփարի (նախագահ) եւ Վան Կաալի հրաժարումը:

ԱՆԳԼՈՅՆ ԼԻԱՅՈՒ ԲԱՃԱԿԻ ՄՐՑԱՆԱՐԸ

ԼԻՎԵՐՓՈՒԼ ԱՊԱՀՈՎԵՑ ԿԻՍԱՒԱՐՏԱԿԱՆԻՆ ԻՐ ՏՈՍՍԸ

Անգլիոյ ֆուտբոլի իտալացի քաղաքացի մրցաշարքին քաղաքի աւարտականին իր կատարած մրցումներուն Մանչեսթըր Եուրո Սթըրլինգը եւ Լիվերպոլ յաղթանակներ արձանագրելով՝ ապահովեցին կիսաաւարտական հանգրուանին իրենց տեւողութիւնը: Երրորդ մրցումները տեղի պիտի ունենան յառաջիկայ տարի (2003) Յունուար 6ին, իսկ դարձի մրցումները՝ Յունուար 20ին:

Լիվերպոլը քիչ մը դժուարութեամբ ապահովեց իր տոմար, որովհետեւ Սթըրլինգի վնասներէն տեղի ունեցած մրցումին (4-3), անիկա իր յաղթանակի կոլը նշանակեց մրցումին վերջին վարպետին, շոտլանդացի Տէնի Մըրֆիի:

Կիսաաւարտականի մրցումները, բարեբախտաբար սակայն, իրարու կիսի պիտի չհասնեն Լիվերպոլի ու Մանչեսթըր Եուրո Սթըրլինգի միջեւ: Անոնք կը կարծուին, որ աւարտական մրցումը ըլլայ բաւական հետաքրքրական, անշուշտ եթէ Մանչեսթըր եւ Լիվերպոլ յաջողին իրենց տոմար պահպանել:

ՎԱՆԱՅ ԶԱՅՆ

Այսօր՝ Ուրբաթ, 20 Դեկտեմբեր 2002, երեկոյեան ժամը 5:30ին «Կանայ Զայն»-ն ունկնդրեց Ե. Յ. Դ. Լիբանանի Կայ Դատի Մարմնի պատրաստած «Կայ Դատը այսօր» յայտագիրը:

- Շաքրուան մտածումը
- Լուրեր՝ Կայ Դատի մասին
- Լուրեր՝ Թուրքիայէն
- Պատմական ակնարկ՝ անցեալէն այսօր
- Շարքագրոյց՝ Ամերիկայի Կայ Դատի Յանձնարարութեան հետ յարաբերութիւններու պատասխանատու ընկ. Արօ Նիզիալեանի հետ:

ՊԱՅՐԱԳՏԱՐԵԱՆ ՂԱՍՏ. - MAISON GABY
Տնային Ելեկտրական Առարկաներ - Home Appliances
Նոր Տարուան Բացառիկ Գիներ - Christmas Offers

Gaz Heater Italy 113000LL
STEREO 197000LL
Microwaves 9000LL / 110000LL
TOSHIBA
Panasonic
SAMSUNG
SANYO
LG
White Westinghouse

LEIFHEIT 60000LL
DVD-JG 185000LL
Braun Silk-épil 50000LL
Food Processor England 106000LL
Vacuum Cleaner Japan 113000LL

TEFAL / ASEP
FAGOR

Պուրճ Համուտ, մայր պողոտայ, դեղարան Արաքսի դիմաց, Հեռ.՝ 01/261630

ՓՈՒԹԻՆ ԼԱԽՏԵՍ՝ ՌՈՒՄԻՈՅ ԻՐԱՎԻՃԱԿԻՆ ԵՒ ԱՊԱԳԱՅԻՆ ՆԿԱՏԱՍՐ

ՄՈՍԿՈՒԱ, 19 (ԱՅՓ).- Ռուսիոյ նախագահ Վլադիմիր Փուտինի Հինգշաբթի օր լաւատեսութեամբ արտայայտուած է երկրին վիճակին մասին, տարեկան իր գնահատումը կատարելով, շեշտը դնելով յատկապէս տնտեսական աճին վրայ՝ ազգին ուղղակի սփռումի մը ընթացքին:



Ան երկուքուկէս ժամուան ընթացքին պատասխանած է 51 հարցումներու՝ ուստի յարցազան գանգատներուն մասին:

Կրեմլին յայտնած է, թէ հարցումներուն որեւէ մէկը նախօրօք կարգադրուած չէ եղած:

«Ընդհանուր առմամբ կրնանք ըսել, թէ երկիրը աւելի հարստացած է՝ թէ եւ թերեւս միայն փոքր չափով, իսկ երկրին ընկերային պայմանները բարելաւուած են:

«Ռուսիա կը բարգաւազի եւ արագօրէն կը բարգաւազի, շեշտած է ան: «Ասիական տարուան գլխաւոր արդիւնքը», աւելցուցած է ան:

Մինչ խորհրդարանական ընտրութիւններ կը նախատեսուին 12 ամիսէն, Փուտին յայտնած է, որ յետ այսու Ռուսիա բնաւ իր պարտքերուն հատուցումը պիտի չյետաձգէ, նախատեսելով, որ սղաճի համեմատութիւնները պիտի շարունակեն նուազիլ:

Փուտինի ժողովրդականութիւնը աննախընթացօրէն բարձր համեմատութիւններու հասած է՝ աւելի քան 80 առ հարիւր, եւ կը թուի, թէ 2004ին ան պիտի վերջնորոշուի:

Փուտին խօսած է Հոկտեմբերին Մոսկուայի մէկ թատերասրահին գրաւման դէպքին մասին՝ յայտնելով, որ պէտք է արմատախիլ ընել նման սպառնալիքներ եւ «այդ պատճառով միացանք հակահարձակական ընդհանրական գործակցութեան»:

Ան կոչ ուղղած է ուսուցողի միացած մնալու, ահաբեկչութեան սպառնալիքին դիմաց՝ նման դէպքերու վերաբերեալ յայտնելով արտասահմանէն վարձկաններ՝ «աւազակներ» եւ ոչ Չեչենիոյ բնակիչներ:

ԶՕՐ. ԹՐՈՇԵՒ ԿԸ ՄԵՐԺԷ ԵՆԹԱՐԿՈՒԻԼ ՓՈՒԹԻՆԻ ՀՐԱՀԱՆԳԻՆ

ՄՈՍԿՈՒԱ, 19 (ԱՅՓ).- Չեչենիոյ մէջ ուսական ուժերու ընդհանուր հրամանատար Կորավար Կենատի Թրոշեւ, որ նախագահ Վլադիմիր Փուտինին կողմէ պաշտօնակազմուած էր Չորեքշաբթի օր, կը շարունակէ իր պարտաւորութիւնները կատարել եւ տակաւին հրաժարման թուղթերը չէ ստորագրած, յայտնած են շրջանին մէջ բարձրաստիճան բանակայինները:

Փութին պաշտօնակազմուած է Թրոշեւը, որովհետեւ ան անտեսած է պաշտպանութեան նախարար եւ Փութինի սերտ դաշնակից Սերգեյ Իվանովը՝ Սիպերիոյ մէջ պաշտօնի մը վերաբերեալ:

Կրեմլին ըսած է, որ Թրոշեւ պիտի փոխարինուի Կորավար Վլադիմիր Պոլտերեով, որ ներկայիս Սիպերիոյ պիսուրական շրջանին հրամանատարն է:

ԿԻՊՐՈՍԻ ՏԱԳԱՊ ԵՆԵՔԹԱՆ ԴԺԿԱՄՈՒԹԻՒՆ ԿԸ ՑՈՒՑԱԲԵՐԷ ՄԱԿԻ ԾՐԱԳԻՐԻՆ ՆԿԱՏՄԱՍԻ

Թուրք կիպրացի դեկավար Ռուսթ Տենքթաշ երէկ ղեկավարութեամբ խոստացած է մինչեւ Փետրուարի վերջը բանակցիլ ՄԱԿի Կիպրոսը վերամիացնելու նպատակով մշակած ծրագիրին շուրջ՝ կոչ ուղղելով մրցակից յոյն կիպրացիներուն, որ ճկունութիւն ցուցաբերեն:

Ան ըսած է, թէ ծրագիրը Թուրք կիպրացիներուն հաւաստութիւն չապահովելու եւ զանոնք յոյն կիպրական տիրապետութեան տակ «առանձնաշնորհեալ փոքրամասնութեան մը» պիտի վերածէ:

Միւս կողմէ, Յունաստան երէկ յայտնած է, թէ ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անան յառաջիկայ ամիս Կիպրոսի մէջ իր ներկայացուցիչը պիտի ղրկէ, որ պէտք է փորձէ վերջ տալ կողիին:

ԾՈՑԻ ՄԷՋ ՄԱՔՍԱՆԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ ՍԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԾՐԱԳԻՐԸ ԿԸ ՅԵՏԱԶԳՈՒԻ

ՌԻՍ, 19 (ԱՅՓ).- Ծոցի արաբական երկիրները, որոնք կը պատրաստուէին մաքսատնային միութիւն մը հաստատելու Յունար 1ին, որոշեցին յետաձգել ծրագիրին գործադրութիւնը, յայտնեց բարձրաստիճան պաշտօնատար մը Հինգշաբթի օր:

Ծոցի Գործակցութեան խորհուրդի ելեւմուտքի նախարարները Երկուշաբթի օր հանդիպում մը ունեցած էին Տոհայի մէջ՝ եպրակացելու համար ծրագիրը: Նախարարներու հանդիպումի աւարտին որեւէ ակնարկութիւն չէր կատարուած ծրագիրը յետաձգելու մասին: Աւելի ուշ սակայն, Ծ. Գ. խորհուրդի փոխ ընդհանուր քարտուղար Մոհամետ Մալրուի յայտարարեց յետաձգումը:

Ծ. Գ. խորհուրդին տարեկան վեհաժողովը տեղի պիտի ունենայ Շաբաթ օր Տոհայի մէջ, սակայն Ծոցի քանի մը ղեկավարներ ներկայ պիտի չըլլան, իբրեւ բողոք քաթարեան «Ժապիրա» պատկերասփիռի կայանին դէմ, որուն կարգ մը յայտագիրները սուր քննադատութիւններ կ'ուղղեն Ծոցի երկիրներուն եւ անոնց ղեկավարներուն:

ՊԱՂՏԱՏ ԽԻՍՏ ՈՃՈՎ ԿԸ ՀԱԿԱԴԱՐՁԷ...

Ծարուակուած Ա. ԷԷԸՆ

Նուրթիւնները իրաքի դէմ: Օրաթերթը կ'աւելցնէր, թէ նախագահ Ճորճ Պուշի կ'աւազարկուէր «չինծու» միջոցներու կը դիմէ ծածկելու համար իրականութիւնը, ինչպէս նաեւ արդարացնելու համար իրաքի դէմ զինուորական գործողութիւն մը: «Սաուդա»-ի տեսակէտով Լոնտոն եւ Ուաշինգթոն «խաձ» են գլխաւոր քննիչ շահա Պիթքի իրականութիւնները՝ իրենք դառնալով ՄԱԿի գլխաւոր քննիչները:

Սպիտակ ճան բանբեր Արի Ֆլաշըր Չորեքշաբթի օր յայտարարած էր, թէ Պուշի մտահոգ է իրաքեան թղթածրարին «անտեսած» տեղեկութիւններով: Բրիտանիոյ արտաքին գործոց նախարար Ճէյ Սթրոն եւ ըսաւ, թէ իրաքի յայտարարութիւնը ամբողջական չէ: Պաշտպանութեան նախարար Ճէյ Չոուն սակայն դիտել տուաւ, որ կարգ մը տեղեկութիւններու չգոյութիւնը թիւ 1441 բանաձեւին խախտում պիտի չնկատուի: Սթրոն ըսած էր, որ իրաք կը ստէ՝ յայտարարելով, թէ հրաժարած է քիմիական, կենսաբանական եւ կորիզային զէնքերու

պատրաստութեան ծրագիրներէն: Սթրոն եւ սակայն շեշտեց, որ թղթածրարին մէջ անտեսումները բանաձեւին խախտում չեն նկատուիր: Սթրոն աւելցուց, որ ռեւէ մէկը չ'ուզեր պատերազմը:

Միացեալ Նահանգներու պաշտպանութեան նախարար Տոնըլտ Ռամսֆէլտ իր կարգին վերստին յայտարարեց, որ իրաքէն կը պահանջուի շոշափելի փաստերով հաստատել, թէ հաւաքական քանուղծի զէնքեր չ'ունի:

Իրաքի արտաքին գործոց նախարար Նաժի Սապրի դատապարտեց բրիտանացի պաշտօնակից Սթրոն՝ դիտել տալով, որ ան ստախոս է: Սապրի ըսաւ, որ նախազգահ Սատտամ Հիւսէյն ամբողջական իրականութիւնը փոխանցած է թղթածրարով: Ան դիտել տուաւ նաեւ, որ Սթրոն կ'ուզէ ստել յայտարարելով, որ ամէն մարդ հաւատայ այդ ստեղծին:

Ապահովութեան խորհուրդի մնալուն մնացեալ անդամները՝ Ռուսիա, Ֆրանսա եւ Չինաստան կ'ըսեն, թէ իրաքեան թղթածրարին հանդէպ որեւէ կասկածի հարց

պէտք է լուծուի ԱՆՄՈՎԻՔԻ գլխաւոր քննիչ շահա Պիթքի եւ Հիւսէյն Ուսամայի Միջազգային Գործակալութեան ընդհանուր տնօրէն Մոհամետ Պարատի կողմէ: Յիշեալ երկիրները կը պնդեն, որ Պիթքս եւ Պարատի իրականութիւն ունին թղթածրարը քննարկելու եւ արժեւորելու:

Միւս կողմէ, Ապահովութեան խորհուրդի մնալուն անդամ Մուրիտորոշած է չմասնակցիլ իրաքեան թղթածրարի քննարկման նիստին, որովհետեւ Դամասկոսի փոխանցուած թղթածրարին օրինակը ամբողջական չէր: Արտաքին գործոց նախարարութիւնը յայտնեց, որ նիստին չմասնակցելով՝ Մուրիտորոշած է իրաքեան թղթածրարի կիրարկուած խտրականութեան դէմ:

● ԳԵՐՄԱՆԱԿԱՆ օրաթերթ մը հաղորդեց, որ 1991ի պատերազմէն ետք, ուսական ու չինական ընկերութիւններ զինական ճարտարարուեստի մէջ օգտագործող արտադրութիւններ արտածած են իրաքի խախտելով ՄԱԿի հաստատած պատժամիջոցները:

Համագայինի «Նիկոլ Աղբալեան» Մասնաճիւղի Վարչութիւնը կազմակերպած է **ՀԱՃԵԼԻ ԺԱՄԱՆՑ ԿԱՂԱՆԴ ԴԱՊՈՒԿԻՆ ՅԵՏ** (ՏԷՆ 10 տարեկան փոքրիկներուն համար) Մասնակցութեամբ **BIG BOOM**-ի հաճելի անակնկալներ, քոթիոն, հիւրասիրութիւն եւ խաղեր

Տեղի կ'ունենայ Կիրակի, 22 Դեկտեմբեր 2002ին, Երեկոյեան ժամը 5:00էն մինչեւ 7:00ը «Աղբալեան Հ.Մ.Ը.Ս.» մարզաշաղկապային համալիրին մէջ:

Ծանօթ: Տեղերը ապահովելու համար հեռաձայնել 03 / 783882 - 616791 թիւերուն

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԼԻԲԱՆՍԻ ԵՐԶԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Մասնակցութեամբ՝ **ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԱՐԵԳ, ԿԱՐԿԱԶ ԵՒ ԳԱՅԵԱՆԷ** մանկապատանեկան խումբերու Գեղարուեստական ղեկավարներ՝ **Վ. ՍՏԵՓԱՆԵԱՆ, Զ. ԷԷՇԻՇԵԱՆ, Ֆ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ**

Թուական՝ 20 - 21 - 22 - 25 - 27 - 28 - 29 Գեկտեմբեր 2002 Վայր՝ Յ. Տէր Մելքոնեան քառերասրահ - Պուրճ համալս ժամ՝ Երեկոյեան ժամը 5ին: Տոմսերը ստանալ հետեւեալ կեդրոններէն՝ Համազգայինի գրասխանը, Եղարուեստ կեդրոն, Պուրճ Համալս Տիւրքէթ Գեա, Պուրճ Համալս - Obelisk գրասխանը, Արթիլիս Համազգայինի «Լեւոն Շանթ» կեդրոն, Պուրճ Համալս եւ երկրորդ օրը կիշէն:

ԿԱՂԱՆԴԸ ԴԻՄԱՒՈՐԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԳԻՆԻՈՎ

Նուիրելու համար բարեկամներու եւ յաճախորդներու:

- 1- ՆԱՅԻՐԻ ԳՈՆԵԱՔ՝ 20 տարեկան ցուցիկ յատուկ ծրարումով:
- 2- VEDI ALCO արտադրութեան 15 տեսակ անուսով գինի ցանկ փայտ ստեղծով:
- 3- Գոնեք գանգաւ անուսով անուսով:
- 4- Գինի KHORAN 3 լիթր՝ ցուցիկ տուփով:
- 5- Գոնեք Souvenir ԱՐԹԱՍԱՐ 10տարեկայ:

VAK Trading Կառու., Ըեռ.: 03/626177 - 03/773609 Եւ **UNIVERSE** վաճառատուն, Փոլիկարպոս, «Սարդարապատ» շէնք